ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՋՐԱՌ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, ք. Երևան 0010, Վարդանանց փակուղի 8, (6-րդ հարկ), հեռ.՝ 012 74-00-77, էլ. փոստ info@jrar.am

N 1213

ք. Երևան

«09» 10 2025 թ.

«Դարոնն» ՍՊԸ-ի
տնօրեն Սոֆիա Մանուկյանին
Հասցե՝ ՀՀ ք.Երևան, Լենինգրադյան փող., 31 , բն 42
ՀՎՀՀ՝ 01335381
Էլ. հասցե՝ daronn-arm@mail.ru

Հարգելի՛ տիկին Մանուկյան

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Ջրառ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) և «ԴԱՐՈՆՆ» ՍՊԸ-ի միջև (այսուհետ՝ Կատարող) 22.07.2025 թվականին կնքվել է N «ՀՀՏԿԵՆ-Ջ-ԷԱՃԱՊՁԲ-25/27-1» պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), որով վաճառողը պարտավորվում է սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված և սույն ծածկագրով գնահատման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությամբ՝ նույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջների համապատասխանող գնահատված ապրանքը (այսուհետ՝ Ապրանք) իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով:

Ըստ պայմանագրի բաղկացուցիչ մաս հանդիսացող N 2 հավելվածի համաձայն ապրանքի մատակարարման ժամկետ է նշվել պայմանագրի կնքման օրվանից մինչև 23 օրացույցային օր:

Պայմանագրի 2.4.4-րդ կետի համաձայն Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում

և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

Պայմանագրի 6.1-րդ կետի համաձայն Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 521-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն մատակարարման պայմանագրով ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող մատակարար-վաճառողը պարտավորվում է իր արտադրած կամ գնած ապրանքները պայմանավորված ժամկետում (ժամկետներում) հանձնել գնորդին՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու կամ անձնական, ընտանեկան, տնային կամ այլ նմանօրինակ օգտագործման հետ չկապված նպատակներով օգտագործելու համար:

Օրենսգրքի 538-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն մատակարարման պայմանագիրը միակողմանի փոփոխել կամ այն կատարելուց միակողմանի հրաժարվել (լրիվ կամ մասնակի) թույլատրվում է, եթե պայմանագրի մյուս կողմն էականորեն խախտել է պայմանագիրը:

2-րդ մասի համաձայն մատակարարի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե

(...)

2) բազմիցս խախտվել են ապրանքների մատակարարման ժամկետները:

Հայտնում ենք, որ «Դարոնն» ՍՊ ընկերությունը սույն պայմանագրի 1.3 կետի երկրորդ մասով սահմանված պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված N 2-ով նախատեսված օրացուցային գրաֆիկով սահմանված ժամկետը լրացել է 13.08.2025 թվականին, քանի որ Պայմանագիրը կնքվել է 22.07.2025 թվականին:

Պայմանագրի 2.1 կետի 2.1.7 ենթակետի համաձայն գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի համաձայն վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

(...)

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են (...) օրից ավելի,

Հարկ է նշել, որ Պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելված 2-ով սահմանված ժամետը ավարտվել է 13.08.2025 թվականին, իսկ տվյալ օրվանից անցել է շուրջ երկու ամիս և 3 (երեք) օր:

Ուստի ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով, որ «Դարոնն» ՍՊ ընկերությունը խախտել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ համաձայն Պայմանագրի 2.1 կետի 3.1.7 ենթակետի «բ» պարբերության դրույթով՝ «Ջրառ» փակ բաժնետիրական ընկերությունը միակողմանի լուծում է ՀՀՏԿԵՆ-Ջ-ԷԱԾԱՊՁԲ-25/27-1 ծածկագրով Պայմանագիրը:

Հայտնում ենք, որ «Դարոնն» ՍՊԸ-ի նկատմամբ կկիրառվեն «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Տեղեկացնում ենք, որ Ընկերության կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի և որակավորման ապահովումները սահմանված կարգով կներկայացվեն ընկերությանը սպասարկող բանկ՝ պայմանագրի և որակավորման ապահովումները գանձելու (ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված 900008000664 և 900008000698 գանձապետական հաշվեհամարներին փոխանցելու) նպատակով:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Ընկերությանը սպասարկող բանկի կողմից «ՀՀՏԿԵՆ-Ջ-ԷԱԾԱՊՁԲ-25/27-1» ծածկագրով գնման պայմանագրի տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի և որակավորման ապահովումները գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում ամբողջությամբ վճարվելու դեպքում, անհրաժեշտ է այդ մասին գրավոր տեղեկացնել ՀՀ տարածքային կառավարման և

ենթակառուցվածքների նախարարության «Ջրառ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ կցելով վճարումը հավաստող փաստաթուղթը (անդորրագիրը):

Տեղեկացնում ենք նաև, որ եթե վճարման ենթակա գումարը փոխանցվի ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված հաշվեհամարին, ապա Ընկերության նկատմամբ չեն կիրառվի «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված դրույթները և 2-րդ մասի պահանջները:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՏՆՕՐԵՆԻ Պ/Կ՝ Ա.ԲԵԳԼԱՐՅԱՆ

Կատարող՝ Հ.Բաղդասարյան